Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ     է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնությունից օգտվելու համար «ՖԱՐՄԱՏԵՔ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 536-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման ցանկի 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-19-րդ կետերով.

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15. | 3104209000 | Կալիումի քլորիդ | չոր անջրդի միավոր նյութի վերահաշ-վարկման դեպքում կալիումի պարունա-կությունը K2O-ի մեր ոչ պակաս, քան 62% | կգ | 2000 | Չեխիա | 4212000 |
| 16. | 3905999010 | Պոլիվինիլպիրոլիդոն | Վինիլացետատի կամ այլ բարդ վինիլային եթերների պոլիմեր-ներ, առաջնային ձևերով, այլ վինիլային պոլիմերներ առաջ-նային ձևերով | կգ | 600 | Գերմանիա | 10296000 |
| 17. | 3920104000 | Պոլիէթիլենային թաղանթ PA/PE | Պլաստմասսայե սալիկներ, թաղանթ, ժապավեն և այլ, ոչ ծակոտկեն, ոչ շերտա-վոր և չհամակցված նմանատիպ եղանա-կով ուրիշ նյութերի հետ | կգ | 70000 | Լիտվա | 77454000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | 9018905001 | PVC տոպրակեր | արյան վերցման և փոխներարկման, արյան փոխարինիչ-ների և ինֆուզիոն հեղուկների ներարկ-ման համակարգեր | հատ | 6000000 | Իտալիա | 464000000 |
| 19. | 9018905001 | PVC տոպրակեր | արյան վերցման և փոխներարկման, արյան փոխարինիչ-ների և ինֆուզիոն հեղուկների ներարկ-ման համակարգեր | հատ | 8000000 | Կոլումբիա | 490000000 |

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «120 514 974» թիվը փոխարինել «1 166 476 974» թվով: